ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«12» 06 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000044

Ձեռնարկողը՝ ***«Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամ***
Ք. Երևան, Վարդանանց 8 շ.

Գործունեությունը՝ ***«Պիոներ» պատանեկան ճամբարի ճաշարանային և ժամանցային կենտրոնի մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000044

<<12>> 06 2019թ.

«Պիոներ» պատանեկան ճամբարի ճաշարանային և ժամանցային կենտրոնի մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզի գ. Փյունիկ 2-րդ թաղ. թիվ 12 ճամբար

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի սեփական հողատարածքի վրա (կադաստրային ծածկագիր՝ 07-017-0171-0006): Հողատարածքի մակերեսը կազմում է 3.8 հա, հողի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների է, գործառնականը՝ հանգստի համար նախատեսված:

Գործունեության նպատակն է՝ համալրել «Պիոներ» պատանեկան ճամբարը ժամանակակից ճաշարանային և ժամանցային կենտրոնի մասնաշենքերով:

Համաձայն նախնական գնահատման հայտի գոյություն ունեցող «Պիոներ» պատանեկան ճամբարի տարածքում նախատեսվում է ճաշարանային և ժամանցային (խաղասրահով) մասնաշենքի կառուցում և տարածքի բարեկարգում: Նախատեսվող կառուցապատման մակերեսը կազմելու է 0.2333 հա:

Նախատեսվող գործունեության հարակից տարածքում առկա են առողջարաններ, պիոներական ճամբարներ և այլ շինություններ, բնական էկոհամակարգերը խիստ փոփոխված և ուրբանիզացված են: Նախատեսվող գործունեության տարածքից վերև գտնվում են անտառային էկոհամակարգեր (կաղնի ու բոխի): Գործունեության տարածքում առկա են տեղանքին բնորոշ ծառատեսակներ (կաղնի, լորենի, թեղի, բարդի և այլն) և ծառաթփային բուսականություն: Ճամբարի հարևանությամբ հոսում է Մարմարիկ գետը, որի կամուրջը սահմանազատում է ճամբարի տարածքը մայրուղուց:

Մարմարիկ գետի ափամերձ հատվածները բուսածածկ են: Գետի ջուրն օգտագործվում է ոռոգման և ջրամատակարարման նպատակով:

Ճամբարի և հարակից տարածքների բնական էկոհամակարգերի խիստ փոփոխված և ուրբանիզացված լինելու պատճառով, տարածքում պահպանվել են ահն կենդանատեսակները

(նապաստակը, աղվես, ոզնի և այլն) և թռչնատեսակները (շենքերի տանիքներում բնադրվող որոշ թռչնատեսակներ), որոնք հարմարվել են մարդկային միջավայրին և նոր պայմաններին: Տարածաշրջանին բնորոշ է չոր մայրցամաքային կլիման՝ զով ամառ և ցուրտ ձմեռ:

Այժմ ճամբարի տարածքում գոյություն ունեն 2 հատ երկհարկանի ննջարանային, 1 հատ տեխնիկական սպասարկման մասնաշենքեր, կաթսայատուն, հյուրատուն և պահակակետ:

Նախնական գնահատման հայտով կառուցապատման շինարարական աշխատանքները տևելու են 18 ամիս: Շինարարական աշխատանքները կատարվելու են հաջորդական փուլերով՝ հողային, ենթակառուցվածքների իրականացում, ներքին հարդարում, բարեկարգում: Աշխատանքների կատարման ընթացքում նախատեսվում է օգտագործել տեխնիկական միջոցներ՝ բեռնատար, էքսկավատոր, կռունկ, բետոնախառնիչ, ինքնաթափ:

Ըստ գնահատման հայտի նախատեսվում է ճաշասրահի, ուղղանկյունաձև սրահի, պահեստային տարածքների, վարչական մասի, ժամանցային կենտրոնի (խաղասրահով) օժանդակ և այլ մասերի կառուցում: Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներում կիրառվելու են ժամանակակից նյութեր և բնական քարերի տարբեր տեսակներ:

Նախատեսվում է նաև շենքի պարագծով բետոնե եզրամայթի, ավտոկայանման հարթակի, աստիճանների եզրով հենապատի, բեմահարթակի կառուցման և այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման, շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար (614.4մ^3/շին ժամ): Փոշենստեցման համար ջուրը բերվելու է համապատասխան ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ՝ հողային հանույթ 3320 մ^3, որից 120-140մ^3-ը հողաբուսաշերտ է: Վերջինիս պահեստավորման համար նախատեսվել է 40-45 մ^2 տարածք: Աշխատանքների ավարտից հետո հողաբուսաշերտը, հետլցման համար նախատեսված հողը (600մ^3) և ավելացած հողային զանգվածն օգտագործվելու են անհարթ տարածքների հարթեցման համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ՝ շինարարական աղբի տեսքով (100մ^3), որն օրենքով սահմանված կարգով ամբողջությամբ տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքները կատարվելու են ծառերից ազատ տարածքներում (ծառահատում չի կատարվելու):

Տարածքի ստորգետնյա ջրավազանը հարուստ է բարձրորակ քաղցրահամ ջրերով, որոնք օգտագործվում են որպես ջրամատակարարման աղբյուրներ:

«Պիոներ» պատանեկան ճամբարի ջրամատակարումն իրականացվելու է տարածքում առկա 2 անանուն աղբյուրներից: Ջրօգտագործման ծավալը կազմելու է՝ 41.5 հազ. մ^3, 113.0 մ^3/օր, 1.2 լ/վրկ: Ճամբարի տարածքում գոյություն ունեցող ֆուտբոլի դաշտի ոռոգման նպատակով նախատեսվում է ջուրը վերցնել Մարմարիկ գետից, որի համար պահանջվող ջրառի ծավալը կազմելու է 16200մ^3/տարի: Նախատեսվում է նաև 18 մ^3/ժամ հզորությամբ պոմպակայանի կառուցում:

Ջրահեռացումն իրականացվելու է համայնքային կոյուղու կոլեկտորի միջոցով: Ջրահեռացման ծավալը կազմելու է՝ 37.0 հազ. մ^3, 101.0 մ^3/օր, 1.0 լ/վրկ:

Ճաշարանային մասնաշենքում տեղակայված մուտքերը և սրահը [illegible] են նապակեպատ վիտրաժների տեսքով: Նախատեսված են նաև խմելու ջրի ցայտաղբյուրներ:

Ճամբարի ջերմամատակարարումն իրականացվելու է բնական գազով աշխատող ընդհանուր կաթսայատնից: Կաթսայատանը գոյություն ունեն 2 հատ 300 կՎտ հզորությամբ

գազի կաթսաներ: Նախատեսվում է տեղադրել ևս 620 կՎտ հզորությամբ կաթսա՝ 6մ բարձրությամբ ծխատարով: Նախատեսվող կառույցներն ապահովված են լինելու համապատասխան օդափոխության սարքերով:

Նախատեսվող գործունեության իրականացման վերջին փուլում կատարվելու է տարածքի հարթեցում և բարեկարգում՝ կանաչապատման աշխատանքներ չեն նախատեսվում:

Կառույցը հարմարեցված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժն ապահովող պահանջներին:

Ճամբարի հարակից տարածքներում և նախատեսվող շինարարության տեղամասում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, թափոնների տեղափոխման, ջրամեկուսացնող նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության հետ, որոնց ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն կարճատև և նվազագույն:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է օդային ավազանի, հողային ռեսուրսների աղտոտումից պահպանման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- հողի և սորուն շինանյութերի տեղափոխում՝ ծածկված թափքով մեքենաներով, սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան (3 մ^3),
- կենդանիների կենսակերպի փոփոխություններից խուսափելու համար՝ շինարարական աշխատանքների և աղմուկ առաջացնող գործողությունների կատարում բացառապես ցերեկային ժամերին,
- թափոնների մինչև աղբավայր տեղափոխումը՝ շինարարական թափոնների և կենցաղային աղբի տարանջատում շինհրապարակում,
- հնարավոր արտահոսքերը բացառելու համար՝ հեղուկ նյութերի տեղադրում հատուկ տակդիրների վրա,
- վտանգավոր նյութերի արտահոսքը կանխելու համար՝ շինարարական տեխնիկայի սպասարկում մասնագիտացված կետերում,
- հողաբուսաշերտի պահպանում՝ ՀՀ կառավարության 08.09.2011թ. թիվ N1396-Ն որոշման պահանջներին համապատասխան,
- հողի բերի շերտի օգտահանում և պահպանում հատուկ նախատեսված վայրում, համապատասխան պայմաններում (հողի ծածկում, պահեստավորված հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով):
- հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար՝ շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար՝ շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման տեղերում ավազի կամ մանրախճի կիրառում և այլն:

Փորձաքննական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեության իրականացումը շրջակա միջավայրի վրա կունենա նվազագույն և կարճատև ազդեցություն, կնպաստի պատանեկան ճամբարի կարողությունների զարգացմանը, պատանիների հանգստի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Արտավազդ բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները, մասնավորապես Մարմարիկ գետից ջրառն իրականացնել ջրօգտագործման թույլտվության առկայության դեպքում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
3. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել և ավարտել օրվա սահմանված ժամերին՝ աղմուկից և ճանապարհների բեռնվածության ավելացումից խուսափելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից ներկայացված «Պիոներ» պատանեկան ճամբարի ճաշարանային և ժամանցային կետրոնի մասնաշենքերի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ Թ. Նուրիջանյան